

«13» 10 2021թ.

ք. Սիսիան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Հակոբջանյանի, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀԻԴՐՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սիսիան համայնքի Նար-Դոս փողոցի, Նար-Դոս - Գ. Նժդեհ ճանապարհահատվածի, Խանջյան 1ա , 3ա, Հ. Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10 , Որոտան 2ա, Շիրվանզադե 2ա բազմաբնակարան շենքերի հարակից փողոցների, Որոտան 1,3,5,7, Որոտան 2,4,6,8 բազմաբնակարան շենքերի հետնամասերի, Խանջյան փողոցի վերջնամասի, Րաֆֆու փողոցի մի հատվածի, Ն. Ադունց-ից Տեր-Ղազարյան ճանապարհահատված, Ն. Ադունցի փակուղու, Ա. Մանուկյան փողոցի մայթերի և վաքերի, Գայի 3,4, Բոնակոթ վակայրի, Վ. Ոսկանյան փողոցից դպրոց տանող ճանապարհահատվածի, փողոցների ասֆալտապատման աշխատանքների անվանումը

աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են «Օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 360 օրացույցային օրվա ընթացքում:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացույցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացույցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ «Օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,
դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.
3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.
3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.
3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.
3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին սմադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.
3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:
3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:
3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:
3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:
3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:
3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:
3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:
3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:
3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա

Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված հաշված 1095 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:²⁷

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N - Հավելվածում:²⁸

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման հոսանքի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝
1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

²⁷ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:
²⁸ Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 586398006 (հինգ հարյուր ութանասունվեց միլիոն երեք հարյուր ինսունութ հազար վեց) ՀՀ դրամ, որից 97733001 (ինսունյոթ միլիոն յոթ հարյուր երեսուներեք հազար մեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին 279282198 (երկու հարյուր յոթանասունինը միլիոն երկու հարյուր ութսուներկու հազար մեկ հարյուր ինսունութ) ՀՀ դրամ՝ որից 46547033 (քառասուվեց միլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 307115808 (երեք հարյուր յոթ միլիոն մեկ հարյուր տասնհինգ հազար ութ հարյուր ութ) ՀՀ դրամ՝ որից 51185968 (հիսունմեկ միլիոն մեկ հարյուր ութսունհինգ հազար ինը հարյուր վաթսունութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:²⁹

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի կողմից: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին, ինչպես նաև հիմք ընդունելով 16 նոյեմբերի 2006 թվականի N 1708-Ն որոշման պահանջները: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից

²⁹ Եթե Կապալառուի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս սույն կետից հանվում են «որից — (—) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն» բառերը:

գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և պոտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների անօդանավի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:³²

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանման պարտավորությունների չկատարման կամ ոչ պարզաճ կատարման հանգամանքը:
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված խարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է տասնհինգ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՅՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին. նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101285
ՀՎՀՀ 09215978



Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար

[Signature]
Ա. Հակոբջանյան
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
ք. Սիսիան, Շիրվանզադե 5
<<Ակրա-կրեդիտ ագրիկոլ բանկ>>
ՓԲԸ Սիսիանի մ/ճ
Հ/Հ 220333330649000
ՀՎՀՀ 09804085



Տնօրեն *[Signature]* Վ. Վարդանյան
(ստորագրություն)

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

³⁵ Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տրամադրված ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՄԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱՐ-ԴՈՍ ՓՈՂՈՑԻ, ՆԱՐ-ԴՈՍ - Գ. ՆՏՐԵՀ ԾԱՆԱԴԱՐՀԱՎԱՍՏԻ, ԽԱՆՁՅԱՆ 1Ա, 3Ա, Հ. ԱՂՈՅԱՆ 2, 2Ա, 4, 6, 8, 10, ՈՐՈՏԱՆ 2Ա, ՇԻՐՎԱՆՉԱԴԵ 2Ա ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՓՈՂՈՑՆԵՐԻ, ՈՐՈՏԱՆ 1,3,5,7, ՈՐՈՏԱՆ 2,4,6,8 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՀԵՏՆԱՄԱՍԵՐԻ, ԽԱՆՁՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎԵՐՋՆԱՄԱՍԻ, ՐԱՖՖՈՒ ՓՈՂՈՑԻ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ, Ն. ԱԴՈՆԳ-ԻՑ ՏԵՐ-ՂԱՉԱՐՅԱՆ ԾԱՆԱԴԱՐՀԱՎԱՍՏ, Ն. ԱԴՈՆԳԻ ՓԱԿՈՒՂՈՒ, Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՄԱՅԹԵՐԻ ԵՎ ՎԱՔԵՐԻ, ԳԱՅԻ 3,4, ԲՈՆԱԿՈԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ, Վ. ՈՍԿԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻՑ ԴԴՐՈՑ ՏԱՆՈՂ ԾԱՆԱԴԱՐՀԱՎԱՍՏԻ, ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱԴԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվները կցվում է պայմանագրին:

* Կապալառուն աշխատանքները կատարում է

Չափաբաժին 1 – ՀՀ Սյունիքի մարզի, Սիսիանի համայնք, Նար-Դոս փողոց, Նար-Դոս - Գ. ՆՏՐԵՀ ճանապարհահատված, Խանջյան 1ա, 3ա, Հ. Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10, Որոտան 2ա, Շիրվանչադե 2ա բազմաբնակարան շենքերի հարակից փողոցներ, Որոտան 1,3,5,7, Որոտան 2,4,6,8 բազմաբնակարան շենքերի հետնամասերի հասցեներում:

Չափաբաժին 2 – ՀՀ Սյունիքի մարզի, Սիսիանի համայնք, Խանջյան փողոցի վերջնամասում, Րաֆֆու փողոցում, Ն. Ադոնց-ից Տեր-Ղաչարյան ճանապարհահատվածում, Ն. Ադոնցի փակուղի, Ա. Մանուկյան փողոցում, Գայի 3,4, Բոնակոթ բնակավայրում, Վ. Ոսկանյան փողոցից դպրոց տանող ճանապարհահատվածի հասցեներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101285
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար Ա. Հակոբջանյան



ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
ք. Սիսիան, Շիրվանչադե 5
<<Ակրա-կրեդիտ ագրիկոլ բանկ>>
ՓԲԸ Սիսիանի մ/ճ
Հ/Հ 220333330649000
ՀՎՀՀ 09804085



Տնօրեն Վ. Կարդանյան
(ստորագրություն)

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՄԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱՐ-ԴՈՍ ՓՈՂՈՑԻ, ՆԱՐ-ԴՈՍ - Գ. ՆՇԴԵՇ ԾԱՆԱԴԱՐՀԱՎԱՏՎԱԾԻ, ԽԱՆՁՁԱՆ 1Ա , 3Ա, Հ. ԱՂՈՅԱՆ 2, 2Ա, 4, 6, 8, 10 , ՈՐՈՏԱՆ 2Ա, ԾԻՐՎԱՆՉԱԴԵ 2Ա ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՀԱՐԱԿԻՑ ՓՈՂՈՑՆԵՐԻ, ՈՐՈՏԱՆ 1,3,5,7, ՈՐՈՏԱՆ 2,4,6,8 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՀԵՏՆԱՄԱՍԵՐԻ, ԽԱՆՁՁԱՆ ՓՈՂՈՑԻ ԿԵՐՋՆԱՄԱՍԻ, ԲԱՖՖՈՒ ՓՈՂՈՑԻ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ, Ն. ԱՐՈՆՑ-ԻՑ ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ ԾԱՆԱԴԱՐՀԱՎԱՏՎԱԾ, Ն. ԱՐՈՆՑԻ ՓԱԿՈՒՂՈՒ, Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՄԱՅԹԵՐԻ ԵՎ ՎԱՔԵՐԻ , ԳԱՅԻ 3,4, ԲՈՆԱԿՈԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ, Վ. ՈՍԿԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻՑ ԴՊՐՈՑ ՏԱՆՈՂ ԾԱՆԱԴԱՐՀԱՎԱՏՎԱԾԻ, ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ձափաբաժին 1- Միսիան համայնքի Նար-Դոս փողոցի, Նար-Դոս - Գ. Նժդեհ ճանապարհահատվածի, Խանջյան 1ա , 3ա, Հ. Աղոյան 2, 2ա, 4, 6, 8, 10 , Որոտան 2ա, Ծիրվանզադե 2ա բազմաբնակարան շենքերի հարակից փողոցների, Որոտան 1,3,5,7, Որոտան 2,4,6,8 բազմաբնակարան շենքերի հեմիամասերի, փողոցների ասֆալտապատման աշխատանքներ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Լաբորատոր փորձարկումներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 360 օրացույցային օրվա ընթացքում
2	Նախապատրաստական աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 40 օրացույցային օրվա ընթացքում
3	Հողային աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 80 օրացույցային օրվա ընթացքում
4	Երթևեկելի մաս	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 340 օրացույցային օրվա ընթացքում
5	Դիտահորերի նորոգում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 80 օրացույցային օրվա ընթացքում
6	Եզրաքարերի քանդում և վերակառուցում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 260 օրացույցային օրվա ընթացքում
7	Մայթերի իրականացում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող

		հետո	համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 260 օրացույցային օրվա ընթացքում
8	Իջատելների նորոգում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 290 օրացույցային օրվա ընթացքում
9	Ջրահեռացման վաքերի և խողովակների տեղադրում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 280 օրացույցային օրվա ընթացքում
10	Անվտանգության էլեմենտներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 360 օրացույցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 360 օրացույցային օրվա ընթացքում

Չափաբաժին 2- Սիսիան համայնքի Խանջյան փողոցի վերջնամասի, Բաֆֆու փողոցի մի հարվածի, Ն. Ադոնց-ից Տեր-Ղազարյան ճանապարհահատված, Ն. Ադոնցի փակուղու, Ա. Մանուկյան փողոցի մայթերի և վաքերի, Գայի 3,4, Բոնակոթ բնակավայրի, Վ. Ոսկանյան փողոցից դպրոց տանող ճանապարհահատվածի, փողոցների ասֆալտապատման աշխատանքներ

N Ը/Կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Լաբորատոր փորձարկումներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 360 օրացույցային օրվա ընթացքում
2	Նախապատրաստական աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 40 օրացույցային օրվա ընթացքում
3	Հողային աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 90 օրացույցային օրվա ընթացքում
4	Երթևեկելի մաս	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 340 օրացույցային օրվա ընթացքում
5	Կողնակների կառուցում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 260 օրացույցային օրվա ընթացքում
6	Դիտահորերի նորոգում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 80 օրացույցային օրվա ընթացքում
7	Եզրաքարերի քանդում և վերակառուցում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 260 օրացույցային օրվա ընթացքում
8	Մայթերի իրականացում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող

		համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 260 օրացույցային օրվա ընթացքում
9	Իջատեղերի նորոգում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 180 օրացույցային օրվա ընթացքում
10	Ջրահեռացման վաքերի և խողովակների տեղադրում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 290 օրացույցային օրվա ընթացքում
11	Հենապատերի իրականացում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 280 օրացույցային օրվա ընթացքում
12	Անվտանգության էլեմենտներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 360 օրացույցային օրվա ընթացքում
ԸՆԴԱՄԵՆԸ		Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց 360 օրացույցային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սիսիանի համայնք
 ք. Սիսիան, Սիսական 31
 ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
 Հ/Հ 900292101285
 ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավարի
 պաշտոնակատար



Ա. Հակոբջանյան
 (ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
 ք. Սիսիան, Շիրվանզադե 5
 <<Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ>>
 ՓԲԸ Սիսիանի մ/ճ
 Հ/Հ 220333330649000
 ՀՎՀՀ 09804085

Տնօրեն

Վ. Վարդանյան
 (ստորագրություն)



** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաքանի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231162/ 1	Սիսիան համայնքի Նար-Դոս փողոցի, Նար-Դոս - Գ. Նժդեհի ճանապարհահատվածի, Խանջյան 1ա, 3ա, 4, Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10, Որոփան 2ա, Շիրվանզադե 2ա բազմաբնակարան շենքերի հարակից փողոցների, Որոփան 1,3,5,7, Որոփան 2,4,6,8 բազմաբնակարան շենքերի հեղուկամասերի, փողոցների ասֆալտապատման աշխատանքներ
2	45231162/ 2	Սիսիան համայնքի Խանջյան փողոցի վերջնամասի, Բաֆֆու փողոցի մի հատվածի, Ն. Ադոնց-ից Տեր-Ղազարյան ճանապարհահատված, Ն. Ադոնցի փակուղու, Ա. Մանուկյան փողոցի մայրերի և վաքերի, Գայի 3,4, Բոնակոթքնակավայրի, Վ. Ոսկանյան

փողոցից դարոց
 փանոդ
 ճանապարհահատ
 փակածի,
 փողոցների
 ասֆալտապատմ
 ան
 աշխատանքներ

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին"
 ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական
 միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
ԿԱՊԱԼԱՌՈՒ

Սիսիանի համայնք
 ք. Սիսիան, Սիսական 31
 ՀՀ Ֆին. նախ. գործ. վարչ.
 Հ/Հ 900292101285
 ՀՎՀՀ 09215978

<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
 ք. Սիսիան, Շիրվանզադե 5
 <<Ակրա-կրեդիտ ագրիկոլ բանկ>>
 ՓԲԸ Սիսիանի մ/ճ
 Հ/Հ 220333330649000
 ՀՎՀՀ 09804085

Համայնքի ղեկավարի
 յաջտոնակատար **Մ. Հակոբջանյան**



Տնօրեն **Վ. Վարդանյան**
 (ստորագրություն)



Լիսիան համայնքի Նար-Դոս փողոցի, Նար-Դոս - Գ. Նժդեհ ճանապարհահատվածի, Խանջյան 1ա, 3ա, Հ. Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10, Որոտան 2ա, Շիրվանզադե 2ա բազմաբնակարան շենքերի հարակից փողոցների, Որոտան 1,3,5,7, Որոտան 2,4,6,8 բազմաբնակարան շենքերի հետնամասերի, փողոցների ասֆալտապատման աշխատանքներ/Асфальтирование улицы Нар-Дос, участок улицы Нар-Дос - Г. Нжде, прилегающих улиц к многоквартирным домам Ханджяна 1а, 3а, О. Азояна 2, 2а, 4, 6, 8, 10, Воротана 2а, Ширванзаде 2а, задних частей многоквартирных домов Воротана 1,3,5,7, Воротана 2,4,6,8 в городе Сисиане

№	Աշխատանքների անվանումը Наименование работ	Չափման միավոր Единица измерения	Քանակը Количество	Միավորի արժեքը* (հազ. դրամ)/стоимость единицы* (тыс. драм)	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)/Общая стоимость (тыс. драм)	Կշիռը՝ ըստ հրավերի %	Կշիռը՝ ըստ մասնակցի %
		3	4	5	6,000	7	8
1	2						
II	Նար-Դոս փողոց/Улица Нар-Дос						
I	Հողային աշխատանքներ/Земляные работы						
1	Քայքայված պատվածքի քանդում էքս. 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի, /разборка изношенной покрытия	մ3 м3	504,8	0,939	474,169		
2	տեղափոխում լցակայան 7.0 կմ / евозка в отвал 7.0км	տոն тон	984,4	0,527	518,915		
3	Քայքայված պատվածքի քանդում բուլդոզերով տեղափոխում 20մ կուտակումով, բարձում 0.65մ3 շ.տ.	մ3 м3	386	1,395	538,362		
4	տեղափոխում լցակայան 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	752,7	0,527	396,793		
5	Նույնը ձեռքով, բարձում 0.65մ3 շ.տ. էքս. /то же вручную, погрузка экскаватором /0.65м3/	մ3 м3	77,2	6,313	487,367		
6	տեղափոխում լցակայան 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	150,5	0,527	79,359		
				1.Ընդամենը	2494,965	0,96	0,89
II	Երթևեկելի մաս/Проезжая часть						
1	Խճային հիմք h=15սմ Щебеночное основание h=15см	մ2 м2	4825	2,045	9867,897		
2	Քիտումի տարածում 4,12տ/1000մ2 розлив битума 4.12тон/1000м2	տոն тон	19,88	415,205	8253,864		
3	Մանրահատիկ ա/բետոն „Բ” տիպ h=5սմ мелкозернистый а/бетон h = 5см	մ2 м2	4825	5,336	25746,200		
				2.Ընդամենը	43867,961	15,65	15,71
III	Իջատեղեր/Пути						
1	10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.65մ3 շ.տ. ա/ի վրա/Разработка грунта IV10e экскаватором	մ3 м3	130	0,939	122,112		
2	տեղափոխում լցակայան 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	253,5	0,527	133,635		
3	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում էքս. 0.65մ3 շ.տ. ա/ի վրա/Разработка грунта IV10e вручную,	մ3 м3	13,68	6,122	83,745		
4	տեղափոխում լցակայան 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	26,676	0,527	14,063		
5	Հողային պատկերի հարթեցում բուլդոզերով Планировка земельного полотна бульдозером	մ2	718,4	0,015	10,575		
6	Խճային հիմք h=15սմ Щебеночное основание h=15см	մ2 м2	718,4	2,045	1469,243		
7	Քիտումի տարածում 4,12տ/1000մ2 розлив битума 4.12тон/1000м2	տոն тон	2,96	415,205	1228,928		
8	Մանրահատիկ ա/բետոն „Բ” տիպ h=5սմ мелкозернистый а/бетон h = 5см	մ2 м2	718,4	5,336	3833,382		
				3.Ընդամենը	6895,682	2,47	2,47
IV	Մայրեր/Тротуары						

1	Բազալտե եզրաքարերի քանդում և հանձնում սեփականատիրոջը /Разборка базальтовых бортовых	զձ.մ մ3	351	1,219	427,869			
2	Բետոնե եզրաքարի քանդում էքս. 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի վրա /Разборка бетонных бортовых камней	մ3 մ3	2,5	1,483	3,708			
3	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	5,8	0,527	3,031			
4	Գոյություն ունեցող մայթի պատվածքի քանդում էքս. 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի վրա/разборка покрытия	մ3 մ3	56	0,939	52,602			
5	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	109,2	0,527	57,566			
6	Մայթերի կողքին կուտակված թափվածքների մաքրում էքս. 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի վրա /Уборка экскаватором	մ3 մ3	1,82	0,749	1,363			
7	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	3,55	0,527	1,871			
8	Բազալտե եզրաքարի տեղադրում (15x30սմ), միաձույլ բետոնե հիմք 1զձ.մ-0,035մ3 բետոն B15, F100/Установка	զձ.մ մ3	623,6	13,771	8587,895			
9	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20սմ B20-255զձ.մ монолитный бордюр 10x20см B20-255զձ.մ	մ3 մ3	5,10	66,171	337,472			
10	Ավազակոպճային հիմք h=12սմ Песчано-гравийное основание h=12см	մ3 մ3	126,8	5,244	665,023			
11	Ավազային ա/բետոն h=3սմ чаный а/бетон h=3см	մ2 մ2	1056,8	3,568	3770,409			
4.Շնդամներ					13908,808	4,97	4,98	
Բ. Նար-Դոս - Գ. Նժդեի ճանապարհահատված/ Б. Участок улицы Нар-Дос - Г. Нжде								
I Հողային աշխատանքներ/Земляные работы								
1	Քայքայված պատվածքի քանդում էքս. 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի , /разборка изношенной покрытия	մ3 մ3	46,8	0,939	43,960			
2	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	91,3	0,527	48,109			
3	Քայքայված պատվածքի քանդում րուղղգերով տեղափոխում 20մ կուտակումով, բարձում 0.65մ3 շ.տ.	մ3 մ3	36	1,395	50,210			
4	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	70,2	0,527	37,007			
5	Նույնը ձեռքով, բարձում 0.65մ3 շ.տ. էքս. /то же вручную, погрузка экскаватором /0.65մ3/,	մ3 մ3	7,2	6,313	45,454			
6	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	14,0	0,527	7,401			
1.Շնդամներ					232,141	0,09	0,08	
II Երթևեկի մաս/Проезжая часть								
1	Խճային հիմք h=15սմ Щебеночное основание h=15см	մ2 մ2	450	2,045	920,322			
2	Մանրահատիկ ա/բետոն „Բ” տիպ h=5սմ /мелкозернистый а/бетон h = 5см	մ2 մ2	450	5,336	2401,200			
2.Շնդամներ					3321,522	1,19	1,19	
Գ. Խանջյան 1ա, 3ա բազմաբնակարան բնակելի շենքերի հարակից փողոց /прилегающая улица к								
I Հողային աշխատանքներ/Земляные работы								
1	Քայքայված պատվածքի քանդում էքս. 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի , /разборка изношенной покрытия	մ3 մ3	165	0,939	154,988			
2	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	321,8	0,518	166,654			
3	Քայքայված պատվածքի քանդում րուղղգերով տեղափոխում 20մ կուտակումով, բարձում 0.65մ3 շ.տ.	մ3 մ3	90	1,395	125,525			
4	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	175,5	0,518	90,902			
5	Նույնը ձեռքով, բարձում 0.65մ3 շ.տ. էքս. /то же вручную, погрузка экскаватором /0.65մ3/,	մ3 մ3	25	6,313	157,826			

6	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	48,8	0,518	25,251			
1.Ընդամենը					721,145	0,28	0,26	
II Երթևեկի մաս/Проезжая часть								
1	Խճային հիմք h=15սմ Щебеночное основание h=15см	մ2 м2	1398	2,045	2859,134			
2	Քիտումի տարածում 4,12տ/1000մ2 розлив битума 4.12тон/1000м2	տոն тон	5,76	415,205	2391,482			
3	Մանրահատիկ ա/բետոն „Բ” տիպ h=5սմ мелкозернистый а/бетон h = 5см	մ2 м2	1398	5,336	7459,728			
2.Ընդամենը					12710,344	4,54	4,55	
III Իջատեղեր/Пути								
1	10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.65մ3 շ.տ. ա/ի վրա/Разработка грунта IV10e экскаватором	մ3 м3	18	0,939	16,908			
2	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	35,1	0,518	18,180			
3	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում էքս. 0.65մ3 շ.տ. ա/ի վրա/Разработка грунта IV10e вручную,	մ3 м3	6,28	6,122	38,444			
4	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	12,2	0,518	6,343			
5	Հողային պատտառի հարթեցում բուլդոզերով планировка земельного полотна бульдозером	մ2	121,4	0,015	1,787			
6	Խճային հիմք h=15սմ Щебеночное основание h=15см	մ2 м2	121,4	2,045	248,282			
7	Քիտումի տարածում 4,12տ/1000մ2 розлив битума 4.12тон/1000м2	տոն тон	0,50	415,205	207,672			
8	Մանրահատիկ ա/բետոն „Բ” տիպ h=5սմ мелкозернистый а/бетон h = 5см	մ2 м2	121,4	5,336	647,790			
3.Ընդամենը					1185,407	0,43	0,42	
IV Մայրեր/Тротуары								
1	Բազալտե եզրաքարերի քանդում և հանձնում սեփականատիրոջը /Разборка базальтовых бортовых	զծ.մ пм	135	1,219	164,565			
2	Բետոնե եզրաքարի քանդում էքս. 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի վրա /Разборка бетонных бортовых камней	մ3 м3	1,26	1,483	1,869			
3	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	2,9	0,518	1,501			
4	Գոյություն ունեցող մայրի պատվածքի քանդում էքս. 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի վրա/разборка покрытия	մ3 м3	11,2	0,939	10,520			
5	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	21,84	0,518	11,312			
6	Մայրերի կողքին կուտակված թափվածքների մաքրում էքս. 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի վրա /Уборка экскаватором	մ3 м3	2,80	0,749	2,097			
7	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	5,46	0,518	2,828			
8	Բազալտե եզրաքարի տեղադրում (15x30սմ), միաձույլ բետոնե հիմք 1զծ.մ-0,035մ3 բետոն В15, F100/Установка	զծ.մ пм	302	13,771	4158,987			
9	Ավազակոպային հիմք h=12սմ Песчано-гравийное основание h=12см	մ3 м3	23,5	5,244	123,339			
10	Ավազային ա/բետոն h=3սմ Песчаный а/бетон h=3см	մ2 м2	196	3,568	699,281			
4.Ընդամենը					5176,299	1,85	1,85	
V Դիտահոր/колодец								
1	Դիտահորի բարձրացում բետոնով В20-5 հատ наращивание колодцев бетоном В20-5шт	մ3 м3	0,68	75,274	51,187			
2	Գոյություն ունեցող դիտահորերի քայքայված սալի ապամոնտաժում /Демонтаж существующей плиты	հատ шт	1	6,900	6,900			
3	տեղափոխում 7կմ լցակույտ перевозка в отвал 7.км -0,22 м3	տոն тон	0,6	0,518	0,285			
4	Դիտահորերի նոր սալ թուջե կափարիչով /1.5x1.5մ/ /Крышка колодца с люком/1.5x1.5м/	հատ шт	1	8,809	8,809			

	դիտահորի կափարիչ 1.5x1.5մ	հատ шт	1	266,331	266,331		
					333,511	0,12	0,12
	5.Ընդամենը						
Դ. Գ	Հ. Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10 բազմաբնակարան բնակելի շենքերի փողոցներ /прилегающие улицы к						
I	Հողային աշխատանքներ/Земляные работы						
1	Քայքայված պատվածքի քանդում էքս. 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի , /разборка изношенной покрытия	մ3 м3	646,9	0,939	607,627		
2	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	1261,4	0,545	687,018		
3	Քայքայված պատվածքի քանդում րոլդոզերով տեղափոխում 20մ կուտակումով, բարձում 0.65մ3 շ.տ.	մ3 м3	497,6	1,395	694,013		
4	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	970,3	0,545	528,475		
5	Նույնը ձեռքով, բարձում 0.65մ3 շ.տ. էքս. /то же вручную, погрузка экскаватором /0.65м3/	մ3 м3	99,5	6,313	628,274		
6	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	194,1	0,545	105,695		
					3251,101	1,24	1,16
	1.Ընդամենը						
II	Երթևեկելի մաս/Проезжая часть						
1	խճային հիմք h=15սմ беночное основание h=15см	մ2 м2	6219	2,042	12701,686		
2	բիտումի տարածում 4,12տ/1000մ2 розлив битума 4.12тон/1000м2	տոն тон	25,62	415,205	10638,504		
3	Մանրահատիկ ա/բետոն «բ» տիպ h=5սմ мелкозернистый а/бетон h = 5см	մ2 м2	6219	5,336	33184,584		
					56524,773	20,17	20,24
	2.Ընդամենը						
III	Իջատեղեր/Пути						
1	10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.65մ3 շ.տ. ա/ի վրա/Разработка грунта IV10e экскаватором	մ3 м3	37	0,939	34,755		
2	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	72,2	0,545	39,296		
3	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով, բարձում էքս. 0.65մ3 շ.տ. ա/ի վրա/Разработка грунта IV10e вручную,	մ3 м3	3,38	6,122	20,691		
4	տեղափոխում լցակույտ 7.0 կմ / перевозка в отвал 7.0км	տոն тон	6,6	0,545	3,590		
5	Հողային պատտառի հարթեցում րոլդոզերով Планировка земельного полотна бульдозером	մ2	201,9	0,015	2,972		
6	խճային հիմք h=15սմ Щебеночное основание h=15см	մ2 м2	201,9	2,045	412,918		
7	բիտումի տարածում 4,12տ/1000մ2 розлив битума 4.12тон/1000м2	տոն	0,83	415,205	345,379		
8	Մանրահատիկ ա/բետոն «բ» տիպ h=5սմ мелкозернистый а/бетон h = 5см	մ2	201,9	5,336	1077,338		
					1936,939	0,69	0,69
	3.Ընդամենը						
IV	Մայթեր/Тротуары						
1	Բազալտե եզրաքարերի քանդում և հանձնում սեփականատիրոջը /Разборка базальтовых бортовых	զձ.մ пм	447,9	1,219	545,990		
2	Բետոնե եզրաքարի քանդում էքս. 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի վրա /Разборка бетонных бортовых камней	մ3 м3	1,24	1,483	1,839		
